


779

5 I.5



Կարգադրական

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Թիֆ 1




ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կարգ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ

ԳԵՂԱՐԱՆ

և

ՅԱՆՎԱՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ

ԵՄԻՆԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ



ԵՄԻՆԱՆԻ




ԳԵՂԱՐԱՆ

ԵՄԻՆԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ



HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ ՄԺԵՍԵՐԱՅԻՆ JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

|| ԹԻԻ 1 ||

1 ՅՈՒՆԻՍԱՐ 1903



ԿԱՂԱՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երբ տեսաւ որ Դեկտեմբերը վերջանալու վերայ էր, երկնակամարը կապոյտ կը մնար, եւ տերեւները չէին գեղներ, միեւնոյն ծաղիկներն հրագոյն կը փայլէին ծառերուն մէջ, երբ տեսաւ որ թռչնաճանճերն՝ աղամանդազարդ ու ոսկեզօծ թեւերով կը շարունակէին իրենց բզզիւնը ծաղիկներուն շուրջը, երբ հասկցաւ վերջապէս թէ՛ հաւառակ Տարեցոյցին ցոյց տուած ձիւնաբեր օդին, ջերմութիւնը պիտի դիմադրէր և ձմեռը չպիտի գար, ինչ որ իրեն ընտանի եղած էր, իր գիւղին մէջ, երբ դպրոց երթալու կամ դառնալու միջոցին ձիւներու մէջ կը թաղուէր, այն ատեն պզտիկ Լեւոն ձանձրացաւ, ու հանգչելով աղամանթգենիի մը ներքեւ, ուսկից կ'երեւային աղամանթուղերն՝ գոչեց՝

— Ի՞նչ տխուր բան, տարի մը եւս առանց Կաղանդի:

Փոքրիկ Լեւոն, եթէ պէտք է ամէն ինչ ըսել, վաճառականի մը զաւակն էր որ գործի պատճառաւ իր հօրն հետեւած էր. թէ՛ պէտ բարեբաստիկ դիպուածն զիրենք աշխարհիս գեղեցկագոյն մէկ երկրին մէջ նետած էր, բայց այսու հանգերձ՝ կը յիշէին իրենց ծննդավայրն, մանաւանդ Կաղանդի մօտիկնալու միջոցին՝ արիասիրտ Լեւոն կ'զգար իր վիշտերուն կրկնապատկուիլը:

Կաղանդ մը որ ցուրտ չփչեր, Կաղանդ մը որ ձիւն չբերեր, Կաղանդ մը որ ամառուան մէջ կուգայ (որովհետեւ այս երկրին մէջ ամառը տասներկու ամիս կը տեւէ), ասոր Կաղանդ չըսուիր:

Երկու բաներ կը պակսէին պզտիկ Լեւոնին Կաղանդի տօնին համար, երկու հազուագիւտ բաներ այս կլիմային տակ, ուր մարդիկ բոկոտն կը քալեն և չեն մսիր. վառարան մը և հողաթափներ, Բարեբազդաբար յիշեց թէ իր հայրը կաշիէ հողաթափներ ունէր, հետաքրքրական առարկայ, որ մքլոտած կը մնար հիւղա-

կին մէկ անկիւնը: Այդ ոտնամանները կրնային իր գործը տեսնել ու կերակուր եփելու համար պատրաստուած տեղն ալ վառարանի դէր կատարել:

Իրիկուան, Լեւոն՝ հողաթափներէն մէկը վառարանին ծակին տակ դրաւ, եւ հայրիկը համբուրելով գնաց պառկեցաւ:

Ո՛հ հանգիստ ու խաղաղ քուն եւ դեղեցիկ երազ. իր ծնըն-



Դպրոցէ վերադարձին ծիւներու մէջ կը Խաղուէր

դավայրէն հեռու, շատ հեռու գտնուող Լեւոն, առանց գիտնալու թէ ի՞նչպէս, ինքզինքը գտաւ իր գիւղին մէջ: Ձիւնէն ճերմկած ու նեղ փողոցը կը լուսաւորուէր պատուհաններէն ցոլացած լոյսերով. օդին մէջ երգեր կը լսուէին. կերակուրի համեղ բուրում մը և գինիի բոյր մը վեր կը բարձրանար, ու տանիքին վրայ, իր մուճակներով՝ որոնք աղմուկ չեն հաներ թանձր ձիւնին պատ-

ճառաւ, Կաղանդը՝ մօրուքին մէջ եղեամ, կ'անցնէր, ամէն մէկ տունի վառարանին ճեղքէն ներս նայելով ու վար նետելով գեղեցիկ խաղալիկներ, որոնք խոշոր տոպրակէ մը կը հանէր:

Երբ գիւղին շրջանը կատարեց, Կաղանդը կանգ առաւ եւ վառարանի մը խողովակին կռթնելով ինքնիրեն ըսաւ. « Ահաւասիկ բոլոր տունները այցելեցի: Հիմա պէտք է որ Ծխափայտս վառեմ ու քիչ մը ծխեմ » . բայց յանկարծ քերելով քթին ծայրը որ սառնաշունչ քամիէն կարմրեալ էր, « Կրո՛ղ, միմուսց, քիչ մնաց որ պիտի մոռնայի պզտիկ Լեւոնը: Դժբաղդաբար ամէն բան բաժնեցի. ի՞նչ պիտի նետեմ անոր հողաթափներուն մէջ »: Լեւոն, իր անկողինին մէջէն կ'ըսէր. « Կաղանդը, քանի որ այլեւս ուրիշ բան մը չունի, ինծի միայն ափ մը ձիւն բերեր, այն սառնապատ եւ սպիտակ ձիւնէն, որ ամէն տարի չտեսնելուս համար մեծ ցաւ կ'իմանամ »:

Այն ատեն Կաղանդը, իբրեւ թէ լսած ըլլար Լեւոնի այս խօսքերը, տանիքին վրայէն ափ մը ձիւն ժողուեց, կողովին մէջ դրաւ, վառեց ծխափողն ու մեկնեցաւ: Ծխափայտը կը վառէր գիշերուան մթնոթեան մէջ. հովիւները զայն ասուպ մը կը կարծէին:

« Մե՛ղք, կը խորհէր պզտիկ Լեւոն, ճամբան չա՛տ երկար է, Կաղանդը՝ ծեր. որքան ալ որ չուտ ու լաւ քալէ կիզիչ արեգակին տակ անապատներու մէջէն, մինչեւ որ հոս հասնի, ձիւնը հալած պիտի ըլլայ »:

Ու երբ Կաղանդը իր կողովովն հասաւ բողբոջին շնչառապառ, քիչ մը ձիւն մնացած էր յատակը, բայց խիստ քիչ, հազիւ ընկուղի մը չափ խոշոր:

Ծափին ետեւ, տանիքին վրայ, զոր կը լուսաւորէր լուսնի փայլուն ճառագայթ մը, պզտիկ Լեւոն որոշ կերպով նշմարեց Կաղանդն որ իր կողովը թոթուելու վրայ էր: Գնդիկ մը ինկաւ, յետոյ երկրորդ մը, երրորդ մը, յետոյ հարիւր, հազար. կողովն անապառ կ'երեւէր, ու բոլոր այդ ձիւնագունդերը հողաթափին մէջ կ'իջնէին: Ծուռով հողաթափը լեցուեցաւ, ձիւնը խրճիթը գրաւեց. հովի հարուած մը ցիրուցան ըրաւ ձիւնն որ տունէն դուրս ելլելով ու բովանդակ երկրին վրայ թռչտելով՝ սպիտակ թիթեռնիկներու երամի մը նման կը ծածկէր լեռներն ու դաշտերը սպիտակ սաւանով մը:

Խրճիթն հիմա ապակիներ ունէր, ու այդ ապակիները ծածկուած էին սառին կազմած գեղեցիկ նկարներով. վառարան մը ունէր, ուր վառուած փառաւոր կրակին առջեւ ոսկեգոյն մորթով հնդկահաւ մը կը խորովուէր:

Դրացիներ. բարեկամներ եկան ցուրտէն զոդդալով եւ ամ-

բողջովին ձիւնով ծածկուած : Տաքցան , ու սեղմուած նստան : Իրենք տաքուկ սենեակին մէջ լաւ մը պատսպարուած՝ կը լսէին քամիին զօրաւոր ու սուր ձայնը : Ուրախառիթ երեկոյթ մը եղաւ այս . Կաղանդի գիշերուան ճշմարիտ երեկոյթ մը :

Առաւօտուն երբ արթնցաւ Լեւոն , խրճիթը ուր պառկած էր առաջուան՝ Արեւադարձի երկրի խրճիթն էր , դուրսը ձիւնի հետք չէր մնացեր , կապուտակ ու պայծառ երկնակամար մը , կիզիչ արեգակ մը . թռչնաճանճերը միշտ կը բզզային , թութակները միշտ կը պոռչտային ծառերուն մէջ : Պզտիկ Լեւոնի կօշիկները թռչած էին , անշուշտ գիշերուան ցօղէն : Սակայն այս պատմութիւնը ինծի ըրած ատեն՝ ինք կը պնդէր թէ Կաղանդին բերած ձիւնը հալելով թրջած էր զանոնք :

ԱՄՄԱՆՈՐ

Աճիւններու վսեմ սափոր Երկրին մէջ ,
Տարի մ'աչ շուռ գորեցաւ ,
Աճիւն դարձաւ իբրեւ վսեմ գրքի մ'եջ ,
Բնութիւնն աչ ինք'ը գորեցաւ :

Դիցունի՞ք մ'եք , Տասներկու հաս գոհարներ
Կախած վիզէն իբր կղարք ,
Գեղն ու հրապոյր , արդեօք միայն գոհա՞րն էր ,
Որ ծով ձգեց այդ կախարհ :

Աստուածունի՞ք մ'եք մահացու կնոջ նման ,
Դիքեց սիրէր , չ'իմք թոյլի՞ք ,
Բնութեան մթին Ծիրմին յասակ իբր սահման ,
Հանգոյն մեքի մը թոյլի :

Կանանչ , բոսոր , դեղին , ճերմակ նարոսներ ,
Կապած ճակիին խորշումս ,
Եղանակի խորհրդանշան նարոսն էր ,
Որ այժմ աճիւն է , Աստուա՞մ :

Երեք հարիւր վարսուն եւ հինգ երագներ ,
Անոր կեանքին հուսկ սահման ,
Մարդուն սիրած կեանքն աչ արդեօք երա՞զն էր ,
Զի չկայ քա՛ն մ'անսահման :

Տիեզերքի գեղն, զօրութիւն ցոյց տուաւ ան,
Մարմնաոռութեամբ անհամար,
Փիւնիկն է ան որ աճիւնէն շուսնի նման,
Կը յառնէր շուտ մեզի համար:

Ի՞նչ զօրութիւն արփներէն մեզ ձօնուած,
Դանդիւնի ճրագն է ըսե՞մ,
Որ կը մարի մեր ներսիդին, ո՛վ Աստուած,
Մեր եսն տանի Մա՛հն նսեմ:

Տերելի պէս վար թափեցան իր օրեր,
Անհունութեան վիհին մէջ,
Սիրիլական պատգամ կեանքն զայնս կ'օրօրէր
Ինչպէս շուսնակն ծովամէջ:

Ժամանակի ու միջոցի ովկեաններ,
Այդ դիցունեո՞յն են դամբան,
Իր յուռութենէն հո՞ն կը նետէր անձնուէր,
Որ կորսուի յաւիտեան:

Ես չեմ հաւատար թ'այդ Դիցունիին կը մեռնի,
Ո՛չ, մեր կեանքն է որ կ'անցնի,
Ինչպէս մի շանթ, որ չդառնար աշ բռնի,
Օրէնք է այն դամբանի:

Ամանորն դի՛մը չէր երթէք մեր մէջ աշ,
Այլ մի պատգամք նորանուն,
Թէ ոչ Անցեալ, Ներկայ, Յապայ բառեր շոյլ,
Բացատրելու Մահն չ'իր Տուն:

Ի՞նչ է Կադանդ թէ ոչ Հոռմի Բաշկներ,
Ամսագլխու կանչ մ'էր ան,
Վագրի, արջու մորթեր հագած հեզն ու սէր,
Կը տոնէին անխափան:

Նոյն է Երկինք, նոյն է Երկիր, նոյն է Կեանք,
Նոյն է Հոգին, նոյն է Սէր,
Թաքեցողական, ա՛խ մեր մէջ տայ արձագանք,
Բնութիւնն արթն աւ չըսե՞ր:

Է՛, թող անցնին այդ տապանի խորհուրդներ,
Թո՛ղ արշալոյս յառնէ նոր,
Կեանքի երկնէն, ուր գրուած միակ խորհուրդն էր,
« Մա՛հն է նոյն ինքն ԱՄՍՆՈՐ »:

ԾՆՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՐԱԶՄՆ



« Գրիստոս ծնա՛ւ եւ յայտնեցաւ .

Ձեզ եւ մեզ մե՛ծ աւետիս » :

յս մեծագոյն եւ ցանկալի աւետիսը տրուեցաւ 1903 տարի առաջ, որուն Երկինք ու Երկիր ձայնակից եղան : Աստուածային այս մեղեդին, լսեցէ՛ք ի՛նչ քաղցրալուր է որ ամէն տարի եւ ամէն օր դեռ կը հնչէ քրիստոնեայ ականջներու . « Փա՛ռք Աստուծոյ որ բարձունքներուն վրայ կը բնակի . խաղաղութի՛ւն երկրի վրայ, ուրախութի՛ւն մարդերուն » : Յունվարի ցուրտէն սառած եւ ձմեռուան սաստկաշունչ քամիովը մտրակուած դաշտի հովիւներ, ի լուր Փրկչին ծննդեան, հաւատքի սրբազան կրակովը տաքցած, հեւ ի հեւ վազեցին իրենց երկրպագութիւնն ու յարգանքները մատուցանելու յոտս Մանուկ-Փրկչին : Հրեշտակ մը ողջոյն տուաւ անոնց եւ լուսատու մը, իր յաւիտենական ընթացքը փոխած՝ լուսաւոր կողմնացոյցի մը պէս Աստուծոյ ճախարակէն քաշուած, առաջնորդ եղաւ իմաստութեան եւ Մեծութեան : — Մոգ թագաւորներ անոր նայեցան եւ Արեւելքէն փութացին Հըրէաստան : Ինչո՞ւ, ի՞նչ կար . — « Անոր նշանը տեսած էին . Դրախտի Աստուածն իր չորս հազար տարուան խոստումը կատարած էր . « Դաւթի տունէն կոյս մը, Իսրայէլի աղջիկներէն ամէնէն ընտիրն ու սուրբը, Մարիամ անուն, իր կողերուն մէջէն աշխարհի ընծայած էր Մեսիան . Միքիա մարգարէի գուշակած Փրկիչը Բեթղէհէ՛մ էր եկած :

Եւ մինչ իր աղքատիկ խանձարուրներուն մէջէն Մանկիկն Յիսուս կը ժպտէր իր մօր՝ մսուրի աննախանձելի փառքին մէջ, անդին մարդկութիւնն իր դարաւոր մեղքերուն ցնցոտիները կը նետէր մէկդի եւ փրկութեան հանդերձը կը հագնէր գուարթ . իր վզին վրայ կը կտրէր դատապարտութեան անուրն եւ կրօնքի ազատութեան ոսկեմանեակը կ'անցունէր իր պարանոցը : Մարդերու խաւարած մտքերուն եւ միջնցած սրտերուն մէջ լո՛յսը կը ցանցնուէր . նախապաշարումը խաչը կը հանուէր եւ հագիներու յաւիտենական գիշերը դողալով ու առխարխափ կը փախչէր մարդկութեան առջեւէն :

Բայց հրեշտակները դեռ նոր քաշուած Երկինքի սահմաններուն մէջ, հովիւներու սրինգին ձայնը հազիւ լսուած եւ իմաստուն մոգեր՝ իրենց երկրպագութեան հարկն այն ինչ վճարած Մանկացեալ Աստուծոյն, եւ ահա՛ Բեթղէհէմի շրջականներուն մէջ ողբ ու

լացի ձայներ կը լսուին: Ինչո՞ւ... որովհետեւ մարդուն յիմարութիւնը հետամուտ է « Աստուծոյ Արդարութեան Արեգակն » իր անդրանիկ ճառագայթներուն մէջ իսկ փճացնել, Արեւն սպաննել իր արշալոյսին մէջ եւ Կենաց ջուրն իր ափին մէջ ցամքեցնել, չորցնել: Եւ Հերովդէսի սաստիկ մէկ հրամանը՝ « Յերկեմենից եւ ի խոնարհ »՝ իրենց մօր կուրծքերուն վրայէն կը խլէ բիւրաւոր մատաղ մանկիկներ:

Աստուածային Անմեղութիւնը զոհ կը մատուցուի աշխարհի Արդարութեան: Մարդկային հոգիի փրկութիւնը մանրիկ երախաներու կեանքին մէջէն կ'առնէ իր առաջին քայլը՝ որուն առջեւ Եւայի աղջիկները իրենց սրտի է՛ն անուշ պատառները կը նետէին: « Խորհուրդ մե՛ծ եւ սքանչելի »:

Սակայն, Երկինք ա՛լ այցելութիւն տուած է Երկրի. մա՛րդ եղած է Աստուած, որպէս զի մարդիկը առ Աստուած տանի: Սաբեկայ սեղանի Արքահամեան զոհը նուիրագործող « Թո՛ղ ապրի՛ իսահակը որ բազմանայ Իսրայէլը » Աստուածային հրամանը պէտք է որ իր սուրբ ու վէհ նպատակն ունենայ եւ 'իողգոթան Փրկչական զոհի սեղանն ըլլայ: Ուրախութի՛ւն մարդկան եւ խաղաղութի՛ւն աշխարհի. — Պէ՛տք է որ աշխարհ լսէ սա՛յ ցրտասարսուռ բայց փրկարար ձայնը որ հո՛ն, բարձունքին վերեւէն կ'որոտայ. « Թո՛ղ մեռնի՛ Աստուածորդին՝ որ փրկուի աշխարհը », եւ ասոր համար, տառապեալ մարդկութիւնը իր չարչրկուած հոգիին մէջէն, պէտք է որ, անուշիկ հովի պէս բանի մը անցնիլը զգայ ու նախամարդուն ոսկերոտիքը իր գերեզմանին մէջ խայտան ցնծութեամբ: Երեկոյին պիտի դադրի՛ն լացն ու կոծ եւ առաւօտուն ըլլայ ուրախութիւն, որովհետեւ ծնա՛ւ Քրիստոս, ձեզ եւ մեզ մե՛ծ աւետիս:

ՄԿՐՏԻՉ Հ. ՇԷՐՊԵԹՃԵԱՆ



ԱՏԱՂՁԱԳՈՐԾԸ

(ԾՆՈՒՆԴԻ ԱԻԱՆԴԱՎԷՊ)

Կաղանդի նուէր քոչա՝ Վերգիլէին

ՔԱՐԳՄԱՆԻՉԸ

Հին ատենը, այն միամիտ օրերուն՝
Ուր հաւատքը ցուցասէրի փայլ մը չէր,
Ատաղծագործ մը չըքաւոր, բանիբուն,
Աւանի մը առանձնութեան մէջ կ'սպարէր:

Անկեղծօրէն ջերմեռանդ էր թէպէտեւ,
Բայց մեռեր էր վաղուց կինը մարդուն հէզ,
Եւ ապրելու ծանր էր բեռը ակներեւ,
Մայրակորոյս ծագուկներուն հետ երեք:

Ուստի՝ անխոնջ՝ կ'աշխատէր ան շարունակ,
Խոր գիտակից իր սեւ, անբաւոյր վիճակին,
Որով՝ յաճախ չէր ունենար ժամանակ
Ժամ երեքալու, շատն ալ՝ կ'աւրէր կիրակին:

Ու տէր պապան իր վըրայ մեղք կը դնէր,
Բայց ինք՝ բարի, զընտ, անկեղծ, միամիտ,
Միշտ ալ պատրաստ ծառայելու անձնուէր,
Կ'ըսէր՝ « Իրա՛ւ, յանցապա՛րտ եմ աներկմիտ: »

« Զէ՛, կը ներէ ինծի Աստուած հայրաբար,
« Ու մեր վարպետն ալ՝ Ս. Յուսէփ՝ չ'արգիլեր
« Որ սըղոցեմ ու աշխատիմ անդադար
« Որքան ձեռքէ ոտքէ ուժէ չեմ ինկեր: »

« Յիսո՛ւս, դո՛ւն ալ, ազնիւ հոգի սըրբապան,
« Ըսէ՛, դուն որ արհեստէն ես, իրա՛ւոր,
« Ի՞նչ գործ ունիմ խանութին մէջ՝ թէ չըլլան
« Երեք անմեղ որբուկներըս չըքաւոր: »

« Թէ՛ ձեզ որքա՛ն շատ կը սիրեմ՝ լաւ գիտէք,
« Բայց՝ հանգստի ճարակ չ'ունիմ, Տէր Աստուած,
« Ու չեմ դադրիր աղօթելէ ձեզ երբեք,
« Հոգ չէ՛ ոտքերս տաշեղներով ծածկըած: »

* * *

Բայց տարի՛ մը, Ս. Ծնունդի օր մըն էր,
(Ժամկոչ աղբոր կինն է մարեր այս լուրէն),
Պատարագէն յետոյ հանգիստ չի բռներ,
Գործի՛ կ'երեւայ ատաղծագործն անօրէն:

Ու ջերմեռանդ խանութները կը կատողի՛ն:—
Ինքը, սակայն, հրպարտ, մէկի՛ն չէր ըսած,
Անգաղտնապահ՝ թէ հացագործը գեղին
Այն օր դադրեր էր ապառիկ տալէ հաց:

Եւ թէ՛ ատանկ օր մը եթէ համարձակ
Աշխատեր էր առանց խիպի, ամօթի:
Պատճառն այն էր միայն, չը կար պատրուակ,
Որ իր որբեր գէ՛թ չը մնան անօթի:

Պահն էր հասեր ժամերգութեանց իրիկուան,
Եւ գեղացին բոլոր կ'երեւար աղօթքի:
Ատաղծագործը կ'աշխատէր հոն սակայն,
Խոր անձկութեամբ լեցուն իր սիրտն ու հոգի:

Ա՛րդ, կը բացուի դուռը յանկարծ, — սեւ բանքեր, —
Ու կը տեսնէ հէզ բանւորը ապշահար
Սեմին վըրայ ինկած փռւած կիսամեռ
Սուգի քուրջեր հագած պառաւ մը նիհար:

Ու սարսափով՝ մարդը կը ըսէ իր տեղէն,
Կը վերցնէ գայն, « Ե՛լ տեսներ, ի՞նչ եղար: »
Բայց հէզ կինը՝ քուրջերուն մէջ դողալէն
Աղի արցունք կու լայ ինկած ուժասպառ:

« Գործ փընտրողդ բանւորէ մը իմացայ
« Թէ՛ աղջիկըս՝ տղաբերքի ցաւերով
« Կը չարչարուի հոն՝ քաղաքը մօտակայ,
« Եւ անձկութեամբ զիս կը փնտռէ իրեն քով: »

« Մուկնուլուսուն՝ ճամբայ ինկայ անհամբեր,
« Որ ժամ առաջ հասնիմ, բայց վա՛յ իմ գլխուս,
« Տըկարութիւնս վըրաս եկաւ, չը կայ խեր,
« Եւ ատենին հոն հասնելու չ'ունիմ յոյս: »

Մարդն այն ատեն քերեց զըլուխն ու մըռայլ
ձակտիւն վըրայ հոգի կընճիւ մ'էր փորուած,
Ըսաւ « Զունիմ ոչ անասուն ու ոչ սայլ,
« Ու քաղաքն ալ շատ հեռուն է, Տէր Աստուած: »

« Ասանկ բաներն է՛հ ամօժ չեն, ի՛նչ վրնաս,
« Վարժըլած եմ ես միշտ ծանրը բեռներու,
« Մայրի՛կ, փոյժ չէ, իմ շալակըս կը հեծնաս,
« Կը տանիմ քեզ, ուզես՝ որքան ալ հեռու: »

Ո ծրգելով գործը մէկ կողմ եւ զիտակ
Թէ յաջորդ օրն ուտելու իսկ չունէր հաց,
Գոհ եւ ուրախ հէզ պառաւի բեռին տակ,
Ճամբայ ինկաւ կօշիկներն իսկ չը հագած:

* * *

Բայց իրիկունն երբ ա՛լ վըրայ էր հասեր,
Կընծիններու ճամբուն եզըր տրտմազին,
Տուն կը դառնար, կըրած իրանն անվեհեր,
Երազելով իր լաճերուն չոր հացին:

Վաղը, սակայն, չըկար ոչ հաց, ոչ դըրամ,
Կը խորհէր Թէ խեղճ որդուկներն ի՛նչ ուտեն.
Ու փոխատու նոյն իսկ չը կար բարեկամ.
Մուկն էր կոխած՝ երբ զիւղ մըտաւ ուշ ատեն:

Բայց ի՛նչ տեսնէ, — անակընկալն էր ուժգին,
Արդեօք երա՞զ, միժաւսն՝ մը դիւժակալան,
Լոյս մը շըքեղ կը շողշողար երդիքին,
Աղբատ, անշուք երդիքին տակ սալատան:

Եւ կը պատէ զինքը յուզմունք մ'անծանօթ,
Գործիքներուն կանոնաւոր աղմուկն էր
Ջոր կը լըսէր, եւ անպատճառ մարդ կար հող,
Որ լոյս վառած՝ գիշեր ատեն կ'աշխատէր:

Ու շըւարուն, շտապով երբ ներս վագեց,
Այդ ընկերը որ քաղցը՝ իրեն կը ժպտէր,
Հոն տաշելով տախտակները... հըր՝ շք մեծ,
Տէրն աշխարհիս Յիսուս Քրիստոս նոյն ինքն էր:

Ու բողբոջուն լոյսերու մէջ մաքրափայլ
Կը շողշողար իր դէմքն հեզիկ՝ հրճուանքէն,
Սըղոցելով հոն բարեմիտ, անայլալ,
Ինչպէս կըրէմն ի նազարէժ, հին ատեն:

Այդ իրիկուն՝ այս խեղճ մարդուն համար էր
Որ վար իջաւ ատաղձագործն երկնային,
Ջիւ անօթի, անոր Թողուլ չէր ուզեր
Հէզ որբերը այս քաջարի ընկերին:

Ու խեղճ մարդը, մինչեւ գետին խոնարհած,
Իր աչքերուն իսկ հաւատալ չէր կըցեր
Թէ՛ ոսկեզօծ տաշեղներուն մէջ Աստուած
Իրեն համար՝ իր օրականն էր ճարեր:

Թարգմ.

ՅՈՒԱՆ ՍՈՒԱ ՔՕՓԷ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՋ

1. — Ուսանիլ պարտաւոր ես

Արդեօք միայն հնազանդելո՞ւ համար է որ պէտք է որ հնա-
զանդինք: Ո՛չ, որովհետեւ եթէ այդպէս ըլլար, այն ատեն այս
պարտականութիւնը միայն երիտասարդութեան ժամանակ պիտի
ունենայինք, այն տարիքին ուր պարտաւոր էինք հնազանդիլ:
Բայց այդ պարտականութիւնը ամբողջ կեանքի մէջ կը տեսնէ:
Ինչո՞ւ համար ուսանելու՝ կրթուելու պարտականութիւն ունինք,
որովհետեւ հոգի մը ունինք մշակելու ամէն կերպով ազնուացնե-
լու եւ կրթութիւնն ու ուսումը ամէն բանէ աւելի կարեւոր է:

Ուսանելու, կրթուելու պարտականութիւն ունինք, որովհետեւ
ասոնք մեզի դիւրութիւն, միջոց կուտան մեր շուրջն եղողներուն
ծառայութիւն մատուցանելու: Բարիք ընել իմաստութեամբ եւ

խելքով . օգնելու անոնց , որ շփոթութեան մէջ են հայթայթելով անոնց ա'յն ծանօթութիւնները , որ չեն գիտեր , որուն պէտք ունին և զոր ուսումը կուտայ . ահա ուսման եւ կրթութեան գլխաւոր արժանիքը : Ամէնէն մեծ գիտուններն անոնք են , որ մարդկային երջանկութեան համար օգտակար գիտեր կ'ընեն :

2. — Օգտակար հունց մը եւ վնասակար հունց մը

Մարգարիտ իր փոքրիկ պարտէզի ածուին մէջ քանի մը հունտեր ցանեց , ի՞նչ պիտի տան այս հունտերը , Մարգարիտ չգիտեր :

Ահա օր մը հունտերը սկսան ծլիլ . հազարաւոր տեղեր փոքրիկ կանաչ կէտեր կ'երեւան : Շուտով հողն ամբողջովին ծածկըուած է կարծր խոտով մը , որոնց տերեւները իրարու նման չեն : Յողունները կը մեծնան , ոմանք բանջարեղէնի լաւ խոտեր են , ոմանք հասարակ կանաչ խոտեր՝ որ ամէն տեղ կը բուսնին , որոնք չեն գործածուիր եւ օգտակար տունկերուն աճմանը կը վնասեն : Մարգարիտ ասիկա նշմարելով կը քաղէ , հեւուէ կը նետէ անօգուտ խոտերը եւ կրցածին չափ լաւ կը խնամէ միւսները զոր մայրը պիտի գործածէ ընտանիքին սնունդին համար :

Տղա'ք մենք ամէնքս ալ այն հունտերէն ենք զոր Աստուած ցանած է տիեզերքի ընդարձակ դաշտին մէջ : Մեզ կը պատկանի անօգուտ խոտ չլինիլ , որ ամէն ոք կ'արհամարհէ , որովհետեւ ո'չ մէկ օգուտ ունի : Օգտակար տունկին պէս ըլլանք և բարիք ընող : Մեր շուրջը եղողներուն տանք մեր լաւ յատկութիւններուն ծաղիկները եւ մեր սրտին պտուղները : Սիրալիր եւ բարի ըլլանք :

3. — Գիտցիր գաղտնիք մը պահել

Փոքրիկ աղջիկ , դու շատ պզտիկ ես որ հասկնաս գաղտնիք մը պահելու կարեւորութիւնը . ասոր համար է որ լուրջ բան մը քեզ չեն վստահիր , որովհետեւ առանց ուզելու , նոյն իսկ առանց նշմարելու , դուն կրնաս ըսել ինչ որ պէտք չէր որ գիտնային :

Բայց երբեմն կը պատահի որ յանկարծ ուրիշին գաղտնիքը կ'իմանաս կամ կը տեսնես առանց ուզելու . Գիտցիր լուրթիւն պահել , բան մը մի ըսեր տեսածիդ կամ լսածիդ վրայ . « Ատիկա շատ դժուար է » կ'ըսես : — Այո' , շատ դժուար է քու տարիքդ տղու մը համար , բայց դու կրնաս ընել այդ՝ եթէ ուզես : Ամէն անգամ որ շատ հակամէտ ես խօսելու գնա մօրդ ըսէ . միմիայն անոր , կը լսե՞ս , ո'չ եղբայրներուդ , ո'չ քոյրերուդ , ո'չ բարեկամներուդ :

Ստուգիւ, խիստ լաւ բան է լուել գիտնալը : Կ'ըսուի թէ այս հազուադէպ բան է կանանց մէջ, եւ անա ասոր համար կ'զգուշանան : Յիշէ՛ թէ ով որ ուրիշին գաղտնիքը պահել չգիտեր, իրենն ալ չպիտի կրնայ պահել, եւ օր մը պիտի պատժուի :

4. — Ճումարտութիւնն քսէ

Զապէլ գաւաթ մը կոտրեց որ մայրը շատ կը սիրէր :

— Ո՞վ կոտրեց ասիկա, հարցուց մայրը : Դո՞ւն, Զապէլ :

Նա, վայրկեան մը վարանելէ ետք ճիգ մը կ'ընէ իր վրայ :

— Այո, մայրիկ, ես կոտրեցի, կ'ըսէ :

Մայրը կը նայի Զապէլին. անոր կարմրութենէն կը հասկնայ որ աղջիկը ճիգ ըրած է : Մօտը կը կանչէ եւ կ'ըսէ անոր .

— Սիրելի աղջիկս, ճամարտութիւնն ըսելուդ համար մեծ գովեստ մը պիտի չընեմ քեզ, որովհետեւ պէտք է միշտ ճամարտութիւնն ըսել եւ դու պարտականութիւնդ կատարեցիր : Միայն թէ կը գովեմ քեզ որ ինքզինքիդ յաղթեցիր սուտ չխօսելու համար, որովհետեւ յայտնի կը տեսնէի թէ կը վարանէիր : Կը տեսնե՞ս թէ որչափ օգտակար է ճամարտութիւնը ըսելդ : Եթէ դուն չպատասխանէիր « Ես եմ », ուրիշ մէկը պիտի դատապարտէի եւ պիտի կարծէի թէ « Ո՛չ » պատասխանելով կը ստէ ան : Անկեղծ եղիր եւ ճամարտութիւնը ըսէ, թէ պէտքեզի Կժուար գայ : Ի՞նչ խիղճդ քեզ պիտի վարձատրէ :

5. — Սուր մեզ կ'ստորնացնէ

Երբեմն կ'ըսուի . « Այն որ սովորաբար կը ստէ, եթէ օր մը ճամարտութիւնն ալ ըսէ, չեն հաւատար » : Շատ անգամ մեծ նեղութեան եւ ձանձրոյթի կը հանդիպի մարդ ստելով, ուստի բնաւ պէտք չէ ստել : — Բայց միայն այս պատճառով չէ որ պէտք է ճամարտութիւնն ըսել : Այս պատճառը շատ անձնասիրական է. ուրիշ աւելի ազնիւ պատճառ կայ . այն է որ մեր հոգին կ'ստորնանայ, նոյն իսկ մենք ալ կ'ստորնանանք ճամարտութիւնը չըսելով . « Եւ ինչո՞ւ համար մենք կ'ստորնանանք ստելով » կը հարցնէք : — Որովհետեւ մեր հոգին ստեղծուած է գլխաւորաբար ճամարտութիւնը փնտռելու համար, որովհետեւ նա ամէն ինչ կը յարգէ ու կը սիրէ, բնականաբար սուտին ու խաբէութեան չկրնար համբերել : Ուստի, ստելով ինքզինքնիս արհամարհելի աւարկայ մը կը դարձնենք նոյն իսկ մեզի համար : Եթէ ստախօսը վայրկեան մը իր հոգիին նայի, պիտի սոսկայ :

7. — Ի՞նչ է անձնական արժանապատւութիւնը

Դուռն կ'ուզես որ քաղաքավարութեամբ վարուին հետդ, չես ուզեր որ քեզի ծաղրեն սուտ բաներ հաւատացնել ջանալով. միւս կողմէ դու քեզ մաքուր կը պահես, փողոցին մէջ կանոնաւոր կերպով կը քալես եւ կ'ուզես որ քեզի համար ըսեն, « Ահա կրթեալ աղջիկ մը »: Եթէ շատ կը փափաքես ուրիշներուն յարգանքի զգացումը ներշնչել քու վրայ, որչափ ալ փոքր ըլլաս, կը նշանակէ թէ արժանապատւութիւն ունիս, այսինքն թէ դու քեզ պատուաւոր, քաղաքավար եւ շնորհալի կ'զգաս եւ պիտի նեղուէիր եթէ քեզի այդպէս չնկատէին:

Արժանապատւութիւն ունիս եթէ կ'աշխատիս ինքզինքդ կանոնաւոր պահել, միշտ մաքուր լինիլ, մոլութիւններէ եւ անշնորհք բաներէ փախչիլ. Դարձեալ արժանապատւութիւն ունիս, եթէ գիտնալով քու մեծերուդ բարձր արժանիքը՝ անոնց առջեւ չես ստորնանար, չափազանց մեծարանքներ, ստրկութիւններ, գովեստներ չես շնայլեր անոնց հաճելի ըլլալու համար. Համեստ եղիր որովհետեւ քիչ բան գիտես եւ շատ յատկութիւններ պիտի ունենաս: Բայց չահու եւ շողոքորթութեան համար մի ստորնանար. այն ատեն արժանապատւութիւն ունեցած չես ըլլար:

8. — Պատուաւոր պզտիկ աղջիկը պատուաւոր կից կը լինի

Ի՞նչ ընելու է պատուաւոր փոքրիկ աղջիկ լինելու համար: Սուտէն սաստիկ զգուշանալ, աշխատութիւնը սիրել, նաեւ սիրել անոնք որ զինք կը սիրեն, արդարասէր լինիլ, ամէնուն իրաւունքն իրեն տալ: Տղաք, այս ամէնը ձեր մէջ կ'զգա՞ք: Երբեք չէ՞ք ստեր, աշխատութիւն կը սիրէ՞ք, ոչ ոքի անիրաւութիւն չէ՞ք ըներ:

Եթէ այսպէս էք, պատուաւոր աղջիկներ էք եւ յետոյ պատուաւոր կիներ կը լինիք. որովհետեւ պատուաւոր կինը ուրիշ յատկութիւն չունի, եթէ ոչ պատուաւոր աղջկանը. բայց աւելի զարգացած, աւելի ազնիւ եւ սրտով աւելի հաստատուն է:

Մէկ օրէն միւսը յանկարծ պատուաւոր չէն լինիր: Այլ առաքինութեան երկար սովորութիւնով է որ իսկապէս առաքինի կը լինին: Եթէ կ'ուզէք վերջը պատուաւոր կիներ լինիլ, այժմէն սկսեցէք պատուաւորութեան վարժուիլ:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ



ՄՍՈՒՐԻՆ ԸՌՋԵԻ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ԾՆՈՒՆԴ՝ ՄԱՆՈՒԿԵՐՈՒՆ

Փոքրիկ զո՞ւ՛մ Բեքլէնէմի, վերն ի՞նչ նայի՛մ շարունակ՝
Երկնագարդար այդ վառ ջահը բռնե՞լ արդեօք կը խորհի՛մ.
Չեզմէ, սակայն, որքան հեռու, ի դուր բռնել կը ջանամ,
Փափաքնիդ մեծ, խորհուրդ վսեմ, բայց ձեր թելեր են պզտիկ:

Եւ կը լսե՞մ ձայն մը անոյց, նորօրինակ ու սիրուն,
Դո՞ւ՛մ ալ ցանկա՛մ բոթով ձայնով միանալ այդ խմբերգին.
Սակայն, անոնք՝ հրեշտակներ, ձեզմէ որքան են հեռուն,
Անոնք միայն կրնան փառք տալ Եհովային, սրտազին:

Բայց, ով զո՞ւ՛մ, հերի՛մ նայի՛մ, յոյսը ձեր բով պլպլայ,
Հարուսներու շէնք, չկնաղ ապարանքէն ալ հեռու,
Խոնարհ, անեւմ ախոռի մը մտուրիմ մէջ, անզգայ
Իր բացխփիկ աշուկներէն մարգրիտ արցունք կը հեղու:

Ձեր գիրկն առե՛մ մանկիկն Յիսուս, եւ սիրեցէ՛մ սեղմօրէն,
Թա՛մ ու նսնո՛ւ երեսներուն անոյց պաշիկ մը տուե՛մ,
Թող հրեշտակներ՝ բարձրերուն մէջ «Փառք ի բարձունք»ը կրկնեն.
Դու՛մ, մանկական գոգսիկ լեզուով oror, oror երգեցէ՛մ:

Յուրս է դուրսը չըլլայ մըսի, ձեր գիրկն առե՛մ մեղմաբար,
Տափուկ շունչով ու զորովով անոր մարմինն օսփցուցէ՛մ.
Բայց դեռ կու լայ, ինչո՞ւ արդեօք, ո՛չ կաթ կ'ուզէ ո՛չ շաքար,
Ամօ՞թ սեպեց, արդեօք ըլլալ ազգասի մը որդին հէ՛մ:

Երկնից փա՞ռք դեռ կ'երազէ, աշխարհ գալուն կը զգջա՞յ,
Թէ ապարանքի մէջ ծնանել՝ պարծանք մը կը սեպէ:
Բայց, ո՛չ, մանկո՛ւնք ինքն ուզեց ձեզ պէս ըլլայ երախայ,
Ինքը բողոց յօծարակամ երկնի փառքն ու քնարներ:

* * *

Աստուած է ան, մանուկ եղաւ ձեզի նման ու լացաւ,
Որ հանչնայ թէ ի՞նչ են մանկան արցունքները վիշտն ու ցաւ:
Մանուկ եղաւ, գրկեց օրհնեց մանկութիւնը հէ՛մ, նրսեմ,
Անոր բերնին մէջ ալ դրաւ «ՓԱՌԻՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ»ը վրսեմ:

ԱՆԻՒԼԻՆԷ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵԹՈՏՆԵՐ

Ժամանակէ ի վեր թէ Պոլսոյ եւ թէ գաւառներու ուսուցիչներու մէջ զովեւի եռանդ մը կը տեսնուի մանկավարժական շարժումներու հետեւելու եւ այդ նրա պատճառով գրեթէ բոլոր տեսիլի տեսիլները կը կարգադրուին իւր ուրիշ գրեթէ բոլոր տեսիլները, ուստի պատճառակցներու այդ փափաքը զիս մղեց գտնել ամիսը իւր անգամ գրել այնպիսի նիւթի մը վրայ, որ ժամանց ըլլալէ աւելի անոնց պատճառին կարելի եւ էական մէկ պէտք լրացնէ. եւ ասոնց մէջ կարեւորագոյնն են ուսուցման մեթոտները, եւ անոնց կիրառութիւնը նախնական կրթութեան համար որոշուած դաստիարակութեան համար. Ուրեմն հետագայ շարք մը յօդուածներով ամենէն գործածական ու մանկավարժական մեթոտը մէջեղ ղնելէն ետքը, պիտի սկսինք սոյն մեթոտով մշակել Նախակրթարաններու համար Պատ. Ուսումնական խորհրդոյ վարժարաններու համար գծած ծրագրին պարունակած նիւթերը. որպէս զի այս մանկավարժական խորհուրդներ բաղդատական հանգամանք մը ունենան, աչիւ առչել ունեցած եւ դաստիարակման ուղեցոյցներ, որոնք հրատարակուած են գլխաւորաբար նախակրթութեամբ զբաղող ազգերու համար. Ասոնց մէջ ամենէն աւելի նպատակայարմարն է վերջեւ Զուանուայի մէջ հրատարակուած *Pédagogie Scolaire* par J. Carré et R. Figuiet անուն գործը որու հետեւած եւ գրելաւորաբար, երբեմն քաղցածուցեալ եւ երբեմն ընդլայնելով այն սկզբունքները, որոնք հաստատուած գրուած են. իսկ գալով դաստիարակման եղանակներուն, ասոնք ալ զուտ ճշմանական ըլլալով՝ շանացած եւ հայ մանուկներու նկարագիրը զարգացնելով Բիշ ժամանակի մէջ իւրացնել տալ իրենց որոշուած նախակրթութեան նիւթերը. պահելով իրենց տոնը. եւ միջավայրի բարեբեր ու սովորութիւնները, իսկ մէկ խօսքով կրնամ ըսել թէ կատարեալ գործ մը ներկայացնելու յաւանութիւնը չունիմ, սակայն փափաքը ունիմ առաջին անգամ գրել դաստիարակման վրայ:

ԱՐԻՍՏԱԿԷՍ Զ. ՊՅԱՃԵԱՆ

Ա.

1. — Մեթոտին կարեւորութիւնը. 2. — Նախնական ուսուցման ընդհանուր կեդրոնացումը. 3. — Գլխաւոր մեթոտներուն ընտելութիւնը. 4. — Ա. Յայտնատեսիկ (intuitif) մեթոտը. Անոր կիրառութիւնը. 5. — Բ. Յուշադրական (expositif) մեթոտ, ածոր զիս. յատկութիւնը. 6. — Ընծայական (deductif) մեթոտը. Օրինակներ. 7. — Մակածական (inductif) մեթոտը. Օրինակներ. 8. — Սովորատեան մեթոտ. Ասիկա ինքնին ուրիշ բան չէ, եւեթ ոչ Յայտնատեսիկ եւ Մակածական մեթոտներով կատարուած ուսուցման եղանակ մը. 9. — Վերջը յիշուած այստեսակ մեթոտները հրկուրի կը վերածուին: հետազոտութեան մեթոտ եւ վարդապետական մեթոտ: Այս երկու մեթոտներէն առաջինն Հետազոտութեան մեթոտին նախնական ուսուցման մէջ ունեցած գերակշռութիւնը եւ յարմարութիւնը:

Նախնական կրթութեան մէջ մեթոտներու խնդիրը, ամենէն աւելի կարեւորութիւն ունի: Անտարակոյս, աշակերտները կրթելու համար, նախ հմտութիւն ունենալու է, ինչու որ անկարելի է ուրիշին բան սորվեցնել, երբ սորվեցնելիքն իսկ մենք չենք գիտեր. նոյնպէս աշակերտները սիրելու է, մէկ խօսքով, ուսուցիչը իր

գործերուն նախանձախնդիր եւ նուիրուած ըլլալու է եւ հետեւաբար իր դերին գիտակցութիւնը ունենալու է: Բայց լաւագոյն արդիւնք ձեռք ձգելու համար մի միայն հմտութիւն չբաւեր:

Արդ ինչպէս ըսինք, խիստ կարեւոր պայման մըն ալ կայ, որ առաջինէն ալ գերակշիռ է. ան է թէ, ուսուցիչը իր արհեստը գիտնալու է: այսինքն սորվեցնելու եղանակը. պէտք է գիտնայ թէ լաւագոյն եւ օգտակար մեթոտը որն է. մեթոտ մը որ պատշաճի թէ՛ ուսուցման առարկային եւ թէ տղոցը տարիքին եւ իմացական կարողութեանը, Վերջապէս գիտնալու է թէ տղաքները հետաքրքրող, անոնց միտքը հիմնական ու օգտակար ծանօթութիւններով զարգացնող ամենէն խելացի եւ գիտական մեթոտը որն է:

Պ. Մարիօն կ'ըսէ թէ, մեթոտաւոր ուղղութեան մը կամ անոր հակառակին առաւելութիւնները եւ անպատեհութիւնները ամէնէն աւելի մանկավարժութեան մէջ աչքի կը զարնուին: Ծնողքներուն կամ ուսուցիչներուն համար մեթոտ չունենալ ըսելը, հաստատուն կանոններէ զուրկ ըլլալ ըսել է. այսինքն՝ փափաքածնուն կամ ընելիքներուն վրայ որոշ եւ ճշգրիտ դադափար մը չունենալ: Որով մէկ վայրկեանէ միւսը հողմացոյցի պէս կը դառնան, կը խալտափին, կը կըմկըման, ինչ որ երէկ որոշած էին ընել, այսօր կը ջրեն եւ փոխադարձաբար: Պարագաներու, քմահաճոյքին ձեռքը խաղալիք կը դառնան եւ թեթեւ վտանգներու առջեւ կը շուարին կը մնան:

Այս ցաւալի երեւոյթը սա կրկին անպատեհութիւնները ունի որ, ներկային մէջ այլեւայլ վնասներու եւ սխալներու առաջնորդելէ զատ, ուղագան ալ կրնայ կործանել. առանց մեթոտի ծրնողքի մը կամ ուսուցիչի մը վիճակը կը նմանի ովկէանոսին վրայ գտնուող մեծ նաւուն, որ հովերուն եւ ալիքներուն խաղալիք կը դառնայ, երբ հաստատ եւ որոշ նպատակով մը կամ ուղղութեամբ չընթանար եւ վերջապէս հաստատուն եւ կանոնաւոր ղեկավարութենէ մը զուրկ ըլլալով, կամ կը խորասուզի եւ կամ կոհակներուն զարնութիւնով կը փշրուի:

Ահա սա է անմեթոտաւոր գործի մը վախճանը, ըլլա՛յ ինտանկան, ըլլա՛յ դպրոցական, ըլլա՛յ առեւտրական գործի մը կամ ընթացքի մը համար:

Չ. Այս խնդիրը ճշդուած եւ ամբողջացած կը տեսնենք ժամանակակից մանկավարժի մը մտքի դաստիարակութեան վրայ գերաճներով, որոնք սա քանի մը տողերուն մէջ կ'ամփոփենք:

«Նախնական կրթութեան գլխաւոր եւ էական առարկան, կ'ըսէ Պ. Կրէառ, անտարակոյս ամենէն առաջ տղաքը գրական ծանօթութիւններու տեղեկացնել է, որմէ եթէ զրկենք, տղան

կամ մարդը, ինչպէս կ'ըսեն, «մարդկութենէն դուրս» կը գտնուի:

Բայց միեւնոյն ատեն պէտք է զարգացնել տղուն մէջ ողջմը-
տութիւնը եւ բարոյական ոգին: —Առաջինը ողջմտութիւնը—մտքին
եւ տրամաբանութեան մշակումովը, իսկ բարոյական ոգին՝ տղուն
սրտին պատուաւոր, գեղեցիկ եւ օգտակար զգացումները մշակե-
լով, զարգացնել եւ ծաղկեցնել բոլոր այն ազնիւ բնագոյները, ո-
րուն սերմերը արդէն տղաք իրենց հետ կը բերեն ծնած ա-
տեններն:

Արդ քանի որ աս է նախնական կրթութեան միակ նպատակը,
ակներեւ է որ այդ նպատակին մասնաւոր եւ յարմար մեթոտով
մը կարելի է հասնիլ. եւ այդ մեթոտը գլխաւորաբար սա կէտե-
րուն մէջ կը կայանայ.

Հեռացնել բոլոր այն պարսկանութիւնները որոնք ուսուցման
կամ կրթութեան ուղղութիւնը կը քիւրեն, կ'աւերեն, օրինակի հա-
մար, այլանդակ եւ մանուածապատ գրեթէ օրինակներ, երկար
դասեր, գրաւոր վերլուծումներու եւ բայերու անշահ պարտակա-
նութիւններ, անմարտելի ծանօթութիւններ, ասոնք որ եւ է
կերպով օգուտ մը չունին, եւ նոյն իսկ տղուն նկարագիրը կը
թուլցնեն:



ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

Օղային թղթատար. — Տուփերը կը գործեն. — Թեթեւստիկներու նամակ-
ները. — Ելեքտրական գործունէութիւն. — Պոսէն նիկոմիդիա
թղթակցութիւն . . . տա՛սն վայրկեանէն:

Իտալացի ճարտարագէտ Մ. Դաէճճի, որուն նոր գիւտն այն-
քան աղմուկ հանեց, Լոնտոն հասաւ, ուր գործնական փորձեր
պիտի կատարէ իր հնարած թղթատարական նոր դրութեան ա-
ռաւելութիւնները ցոյց տալու համար: Հռոմէն մեկնելէ առաջ,
Մ. Դաէճճի հրաւիրուեցաւ տեսակցիլ Իտալիոյ թղթատարական
նախարար Մ. Կալիմպէրդիի հետ, որ խնդրեց հնարիչէն իր փոր-
ձերը կատարել Անգլիոյ եւ Իտալիոյ միջեւ: Աւառիկ այն բա-
ցատրութիւնները զոր Մ. Դաէճճի կու տայ իր գիւտին վրայ:
Բոլոր քաղաքներն իրարու հետ պիտի կապուին թղթատարական
գիծերով, շատ պարզ եղանակաւ մը, այսինքն երկաթուղիի պէս
ճամբաներ պիտի շինուին պողպատէ թելերով, գետնէն առ նուազն
15 մեդր բարձրութեամբ ցիցերու վրայ հաստատուած: Հնարիչը
մտադրած է այս ճամբուն վրայէն քալեցնել թեթեւ կառքեր,

Ժամը 400 քիլոմէդր արագութեամբ: Գլխաւոր գիծերէն զատ, պիտի ըլլան երկրորդական գիծեր, նուազ կարեւորութիւն ունեցող քաղաքներու համար: Վերջապէս, ամէն կեդրոն պիտի ունենայ օդային թղթատարութեան կայան մը, ուր ինքնին պիտի կատարուին ամէն գործողութիւններ, ինչպէս վակոններուն կենալը, պարպուիլը, լեցուիլը եւն.: Միեւնոյն գծին վրայէն քաղող երկու վակոններու միջեւ ընդհարման վտանգ պիտի չըլլայ երկտրական ոյժի բաշխման մասնաւոր դրութիւնով մը, որու շնորհիւ իրարու ետեւէ գացող երկու վակոնները միշտ 5 քիլոմէդր հեռաւորութիւն պիտի ունենան իրարմէ: Կարեւոր կեդրոններու մէջ, կ'ըսէ Մ. Դաէճճի, նամակներու հաւաքումը պիտի կատարուի երկտրականութեամբ: Մասնաւոր գիծեր պիտի ըլլան որք նամակատուփերու շրջանը պիտի ընեն հինգ վայրկեանն անգամ մը: Պարապ վակոն մը կեդրոնական կայանէն պիտի մեկնի եւ կանգ պիտի առնէ իւրաքանչիւր նամակատուփի վրայ, որ մասնաւոր մեքենականութեամբ մը շինուած ըլլալով գողաւոր սիւնի մը մէջէն վեր պիտի ելնէ եւ նամակները վակոնին մէջ պարպելէ ետք, նորէն իր տեղը պիտի իջնէ: Նամակներուն վրայ դրոշմ փակցուիլն ալ մեքենաբար կ'ըլլայ: Նամակը, տուփին ներկայացուելուն պէս, կ'իյնայ ճարտարօրէն շինուած մամուլի մը վրայ որ դրոշմը կը զարնէ, թուականը կը գրէ եւն.: Որովհետեւ կեդրոնական կայան մը չի բաւեր, մեծ քաղաքներու մէջ պիտի հաստատուին մասնաճիւղեր, որք պարզ եւ յանձնարարեալ նամակներ ընդունելով պիտի զրկեն կեդրոնական կայան: Մ. Դաէճճի, որ ամէն բանի վրայ կը խորհի, կ'ըսէ որ նամակներուն բաշխումը կատարուի հեծանուորդ ցրուիչներու միջոցաւ: Ահա թէ ինչպէս պիտի զատուին նամակները: Դուրսէն կամ քաղքին մէջէն եկող վակոններու նամակներն հորիզոնական ձեւով դրուած փոկերու վրայէն կը թափին եւ կ'երթան պաշտօնեաներու առջեւ: Ասոնք, դրոշմները ճշդելէ ետքը, առաջին զատումը կ'ընեն. այսինքն հոն մնալիք նամակները կը զատեն անոնցմէ որք ուրիշ տեղ պիտի երթան: Այս երկու տեսակ նամակները, միշտ փոկերու վրայէն, կը փոխադրուին ուրիշ պաշտօնեաներու առջեւ որք զատելու գործողութիւնը կ'ամբողջացնեն: Դաւաւի եւ արտասահմանի նամակները, իրենց հասցէներուն համեմատ կը բաժնուին եւ նոյն քաղաքէն մեկնող օդային գիծերուն կը յանձնուին: Զատումի գործողութիւնն աւարտելէ ետքը, ամբարձիչ գործիչներ նամակները կը տանին վակոններու մեկնման սրահը: Մ. Դաէճճի գիտել կուտայ որ մետաղեայ թելերով շինուած օդային գծին առաջգականութիւնը կրնայ շատ մեծ արագութիւն

մը ձեռք բերել մանաւանդ եթէ փոխադրուելիք նամակները թեթեւ ըլլան, այնպէս որ... թեթեւալիկներու նամակներն ամէնէն առաջ պիտի հասնին իրենց տեղը (°): Վերջապէս, զետեղման ծախքերու գալով, Մ. Դաէճճի կ'ըսէ թէ օդային գծին մէկ քիլոմէտրին համար 5000 ֆրանքէն աւելի ծախք պիտի չըլլայ: Գաղափար մը տալու համար թէ ո՛րքան արագ պիտի փոխանակուին նամակներն այս դրութեամբ, ըսենք թէ, օրինակի համար, Հանրագիտակի Հրատարակիչը կը փափաքի նամակաւ շնորհակալութիւն յայտնել Նիկոմիդիոյ իր մեծայարգ Գործակալին, բաժնեգինները շուտով ղրկած ըլլալուն համար. Գործակալ էֆէնտին այս նամակը պիտի կարդայ անոր գրուելէն եւ նամակատուի ձգուելէն... տա՛սն վայրկեան ետքը:

ԺԻՐԱՅԻ ՇԻՐԱԿԱՅԻ

ԱՇԽԱՐՀԻՍ ՆՇԱՆԱԻՈՐ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ

ՍԿԵԶՈՒՆ ՄԻՆՉՅԻ ՄԵՐ ՕՐԵՐ

Յոյն նկարիչներ

Ձեօֆիս. — Քրիստոսէ առաջ 468ին (կամ 470ին) ծնած, մեռած 400ի ատենները: Նկարչութեան մէջ կենդանութիւն դնելով՝ քանդակագործութենէ տարբեր ճամբու մը մէջ մտցուց:

Բարապիւս. — Եփեսոսի մէջ ծնած 400ին (Քս.է առաջ), Իօնեան դպրոցին մէջ մրցակից Ձեօքսիսի՝ վարդապետական գերագանցութեան համար:

Աբելլիս. — Ծնած Քրիստոսէ 305 տարի առաջ: Հնութեան ամէնէն մեծ նկարիչը եւ Մեծն Աղեքսանդրի կենդանագիրը գրծողը:

Ֆլաման, Հոլանտացի եւ Գերման նկարիչներ

Հանս Հեմլիկ. — Ֆլաման. ծնած Մայանսի մէջ 1425ին, մեռած Ֆրիւտի մէջ 1499ին: Վան էյքի պէս, փափուկ գոյներով նկարած է պտուղի, զգաստ ու բարեպաշտիկ արարածներու սիրուն ամբողջութիւն մը՝ ոչ շատ բարձր միատիքականութեամբ մը: Իր ամպածոյճ ու հոգեյոյզ նկարները վերջին ծայր շնորհալի ու անմոռանալի են: Նշանաւոր գործերն են՝ Ս. Իւրսալայի մասունքատուփը, Ծննդաժամը, Յարութիւնը, եւայլն:

Վան-էյֆ. — (1386—1440) Ֆլաման նախնական նկարիչներու ամէնէն սքանչելին, իւղանկարը ինքը հնարած չէ, բայց եւրոպական շոքերուն չորնալու յատկութիւն ունենալն ինք գը-



ՎԱՆ ԷՅԲ

տած է. կարելի է ըսել թէ աշխարհիս վրայ միակ նկարիչն է որու գոյները թարմութիւն մը ունենան — սիրալի, հիանալի թարմութիւն մը: Նկարներուն յատկապէս միշտ գեղեցիկ գիւղանկարներով զարդարած է: Երեւելի են՝ Գառն Աստուծոյ երկրպագութիւնը, Ս. Կոյս Աստուածածինը, Մոգերու պաշտամունքը:

Քանքէն Մեքքիս. — Ֆլաման, ծնած Լուվէնի մէջ 1466ին, մեռած Անվէրսի մէջ 1530ին: Բնասուր հանճար մը որ Ֆլաման գեղարուեստին մէջ մեծ ազդեցութիւն ունեցած է: Նկարչութիւնը ազատեց «Հոլանտական անտիութիւններէ» եւ տրամադիք զգացումը աւելի ընդլայնելով՝ կիրքի յարադէպերուն միութիւն մը տուաւ: Նոյնպէս նորանշան պատկերներ ստեղծելով՝ գրեթէ գեղեցկութեան իտէալ զգացում մը կը ցուցնէ: Գործեր. Քրիստոսի թաղումը, Ս. Յովհաննու Մկրտչի մարտիրոսութիւնը, Ոսկի կռուողը:

Տիւրեք. — Գերման, Նիւրնբերգի մէջ ծնած 1471ին, հոն մեռած 1528ին: Նշանաւոր արուեստագէտ մը որ ԺԶ. դարու Գերման գեղարուեստական ճաշակը զարգացնելու մեծապէս նպաստած է: Ամենէն աւելի փորագրութեան յատուկ արուեստը մշակած է: Իր յղացումները ինքնատիպ են, թէեւ շատ անգամ քրմահաճ. սակայն ճշմարտութեան զգացում մը միշտ ներշնչած է անիկա: Դէմքեր նկարած ժամանակ աւելի ո եւ է զգացումի արտայայտութեան նրբութիւններով կ'զբաղի քան թէ կը ջանայ ամբողջ պատկերին զուտ ազնուութիւն մը տալ: Նշանաւոր նկարներն են՝ Ադամ ու Եւա, Յիսուս՝ խաչին վրայ, Բիւր սուրբերը:

Լիւքսա ք Բրանսֆ. — Գերման, ծնած Բրանսքի մէջ 1472ին, մեռած Վէյմարի մէջ 1553ին: Ժամանակակից Տիւրեքի միեւնոյն դադափարներով տոգորեալ Սաքսի մէջ պետը եղաւ նոր դպրոցի մը՝ որ գեղեցիկն ու հունաւորը մէկդի դնելով՝ նկարագրելին վրայ թափեց բոլոր ոյժը: Իր կենդանագիրները ինքնատիպ են:

Լիւքսա ք Լէյս. — Հոլանտացի, ծնած Լէյտի մէջ 1494ին, մեռած 1533ին: ԺԶ. դարու հոլանտական հին նկարիչներէն մին: Իր գոյները՝ փայլուն եւ բնական են, նկարը խիտ: Իր զգայնութիւնն՝ ամէն հոլանտացի նկարիչի պէս՝ երկու հոսանքներէ առած է. համոզումը, ընտանի ազնութեան ճաշակն եւ արտայայտութեան իրապաշտութիւնը:

Հանս Հոլպէյն. — Գերման. ծնած Աւիգպուրի մէջ 1497ին և

մեռած Լոնտոնի մէջ 1543ին : Իրեն չափ ոչ ոք կրցած է կենդանագրի մը գիմագծերուն մէջ հոգի դնել : Իր տաղանդն երկու ներշնչումներէ ձուլուած է՝ իտալական վերածնութիւնն եւ Ֆլաման աւանդութիւնը :

Ռիւպէնս. — Ֆլաման, ծնած Քօլօնէի մէջ 1577ին, մեռած՝



ՌԻՒՊԵՆՍ

Անվէրսի մէջ 1640ին : Գերահանճար նկարիչ. հրաշալի է իր դիւրութեամբ, աչքի ու ձեռքի ճշդութեամբն եւ քրիստոնէական զգացումին կատարելութեամբն : Իրեն մէջ նիւթական զարդարանքի չքեղութենէն աւելի բան մը կայ՝ նիւթի մը սրտայոյզ կողմը անմիջապէս ընդերկող ամեհի իմացականութիւն մը : Իր նըշանաւոր գործերն են՝ Քրիստոս՝ երկու աւազակներուն մէջ, Հըրաշալի որսը, Մոգերու երկրպագութիւնը, Եղիա մարգարէն :

Ժօրսաեմս. — Ֆլաման, ծնած Անվէրսի մէջ 1593ին, մեռած՝ 1678ին : Իր երանգներուն մէջ ունեցած յաջողութիւնը, մանաւանդ շուքերու համար խիստ գերազանց է, նոյն իսկ Ռիւպէնսէն ալ աւելի յաջող : Ձեւերու մասին ալ խիստ յաջող է. բայց գուհիկ. ծաղրանկարները՝ որոնց մէջ կարծես նըրութիւնն ու շընորհքն այպանուած են՝ ի յայտ կը բերեն արուեստագէտ մը որ « մտատիպարին » կոնակը կը դարձնէ եւ « ճաշակը » գետինը՝ ցեխին մէջէն կը ժողուէ : Իր գործեր՝ Քրիստոս՝ Տաճարէն դուրս կը վանէ յումայափոխները, Անցորդն ու երգիծարանը, Յիսուս՝ վարդապետներուն մէջտեղ, Վերջին դատաստանը, Քրիստոս եւ Փարիսեցիք :

Թարգմ. ԶԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Տարաբաղդ քնկերոջս՝ Գ. ԷՖ. ՇԱՀՆՆԵԱՆԻ յիշատակին

ՃՈՆ ՔԻՑ ԵՒ ԻՐ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐԸ

1795—1821

Երբեք չկրցայ հասկալ թէ դատողութեամբ
ի՞նչպէս կը հասնին ճշմարտութեան:

ՔԻՑ


Ա.

Ճոն Քից՝ անգլիական մեծագանձ գրականութեան վաղամե-
ռիկ հանճարը՝ ծնաւ Լոնտոն 1795 հոկտեմբեր ամսուն: Finsburyի
մէջ եւ մեռաւ 1821 փետրուար ամսուն մէջ: Հայրը ձիապան մըն
էր, որ մեռաւ երբ Քից դեռ նոր ճանչնալ ու վայելել սկսած էր
զայն, սակայն իր մայրը ազդեցիկ, ճարտար ու զուարթ կին մը
ըլլալով կրցաւ զաւակին վրայ հարկ եղած խնամքը տածել: Ճոն
Քից իրմէ զատ երեք եղբայրներ ու մէկ հասիկ քոյր մը ունէր,
Ֆէննի: ասոնց մէջ Քից էր որ ամէնէն տարօրինակ նկարագիրը
ունէր. անսանձ ու անգութ պատանեկիկի մը բոլոր չարաճճիու-
թիւններու հոյլ մը կարելի է վերագրել իրեն, եթէ չեն սխալած
իր կենսագիրները: Հայտըն կը պատմէ որ, օր մը հինգ տարե-
կան հասակին մէջ ձեռքը սուր մը առած իր մօրը սենեակին առ-
ջին կեցաւ եւ երգում ըրաւ որ մինչեւ ինք չհաճի դուրս պիտի
չելլէ: մայրը կը ստիպուի դրացիները օգնութեան կանչել, ո-
րոնք զինքը ազատեցին իր զաւակէն: Երբ 1804ին իր ամուսինը
մեռաւ, չքաւորութեան պատճառաւ կրկին անգամ ամուսնացաւ
Rowling անուն մարդուկի մը հետ, որմէ յետոյ բաժնուցաւ, Ed-
monton, իր մօր քովիկը ապրելու ըղձանքով: Քից այս անձուկ
վիճակին մէջ դեռ անփորձ պատանի մը ըլլալով, անշուշտ չէր
կրնար դատել ընտանեկան յայտնի թշուառութեան մը չարաչուք
հետեւանքը: Քից Edmoutonի տան մէջ ապրեցաւ 1806-1810. եւ
Enfieldի, Լոնտոնի հիւսիսային կողմը հաստատուած դպրոցկան
յարկի մը տակ անցուց իր ամէնէն գեղեցիկ տարիները: Անոր
կենսագիրները, ընկերակիցներուն յիշատակներէն քաղելով կը
գրեն թէ՝ Քից թարթափուն եւ ոչ ալ այնքան աշխատասէր ըլ-
լալով հանդերձ, վեհանձն ալ էր եւ միաժամանակ կրքոտ: Ա-
մէնքը կը զարմնային անոր ազնուութեան, քաջասրտութեան
եւ հոգեկան ու մարմնական գեղեցկութեանց վրայ. կռուազան էր
եւ միեւնոյն ամեն կը գլէր կ'անցնէր իր ընկերները մարմնա-

մարզի խաղերուն մէջ եւ նշանաւոր կը հանդիսանար ինչպէս որ անգլիացի դպրոցականի մը կը վայլէր: Խնդուքին քով արցունքները, իսկ ներդամութիւնը բարկութեան մօտիկ բոյն դըրած էին:

Enfield բնակելուն վերջին օրերը իր ներքին աշխարհին մէջ յեղաշրջում մը տեղի ունեցաւ, բայց այդ յեղաշրջումին պատճառը արտաքին ըլլալու հանգամանք ունէր, վասնզի անկէ ետք ինքզինքը տուաւ ընթերցամոլութեան, որ տաղանդներու եւ հանճարներու պաշտելի հիւանդութիւնն է: Զեռքը ինչ գիրք որ իյնար լափելով կը սպառէր անոր էջերուն խմաստները: Lempriereի Դասական բառարանէն հաւաքադեց Հին Յունաստանի վրայ ունեցած ծանօթութիւնները: Երբ 1810ին իր մայրը արդէն մեռած ըլլալով, երկու խնամակալներու իշխանութեան տակ մնաց որոնք զինքը Enfieldի դպրոցէն հանելով Edmonton գտնուած բըժիշկի մը քով իբր աշկերտ զրկեցին, 15 տարեկան էր: Այս սահած տարիներուն վրայ ո՛ր եւ է կենսագրական փուլեր չեն յիշատակեր, ո՛չ Monckton Milnesի, ո՛չ Harry Buxton Formanի եւ ո՛չ իսկ Sidney Colvinի Քիցի վրայ գրած ուսումնասիրութիւնները: Յայտնի է թէ՛ անգլիական մտաւորական կեանքի պատմութեան մէջ Քիցի պէս մե՛րթ դաժան ու մե՛րթ ժպտուն, հաստատուն առանցքի մը վրայ չկեցող հանճարներ շատ են, կարծես իրենց կոչումին շուրջ աճող դափնիէն գինով ու հպարտ եւ դուն ուրեք ամբարտաւան ու ամբարհաւած վիճակ մը կը ստանան: Արդեօք փառքի զգացումին հեղեղանման աճողմն է որ հանճարները դէպ ի յիմարութեան կալուածը կը մղէ: Ո՛չ, փառքը յաճախ երկու սահմանաձայրերէն մէկը կ'ընտրէ: Առաջինն է գիտակից հպարտութիւն որ ուրիշներուն յարգել կու տայ: Երկրորդն է մարդատեցիկ ամբարտաւանութիւն: Առաջին դասակարգին կը վերաբերէր Քից, երկրորդին, շեղելով ըսենք, ի կը վերաբերէր Պայրըն, իսկ իտալական գրականութեան մէջ՝ Լէոբարտի, ահաւոր յոռետեսը: Տասնըհինգամեայ Քից, տարակոյս չկայ թէ իր մանկական կրքոտ, ծիծղուն նկարագրէն դեռ բան մը կորսնցուցած չէր: Endymion, Hyperion կարգացողներ բացերեւակի կրնան դիտել այս հոգեբանական իրողութիւնը: Թերեւս Լոնտոնի մշուշները Քիցի եսին վրայ ալ կը ծածանին, դրօշակի մը պէս, որուն ծալքերէն քերթողին սրտի թրթռուն վիճակը կարելի է գուշակել: Դեղեցկին թրթռումներուն ու յուզումներուն համար ծնած Լոնտոնցին, տեսնենք ինչ ակերէ պիտի խմէ ներշնչումներու այն դիցական նեկտարը որուն խմորումէն տարբեր բան մը չէր արդէն իր գեղամոլ Սիրտը:

ՄԻՀՐԱՆ ԹԱՊԱԳԵԱՆ



ԱՆԽՈՆՁ ՎԱԼՍՈՂՆԵՐ

Կըր պղտիկ խցանի մը մէջէ անցուցէք երկու կարի ասեղներ: Ասեղներուն ծայրերը անցուցէք սունկի շատ պզտիկ կտորներ եւ ասոնց վրայ փակցուցէք, միշտ միեւնոյն կողմը ըլլալու պայմանաւ քափուրի (քեաֆիրի) կըտորներ: Եթէ ջուրի վրայ դնէք սոյն գործիքը՝ կ'սկսի դառնալ եւ երկար ժամանակ կը շարունակէ առանց կանգ առնելու: Յաջողութեան միակ պայմանն է՝ որ ո՛չ ջուրին եւ ո՛չ ալ սունկէ գործիքին իւղոտ, ծարպոտ մարմին մը քսուի: Քափուրը փակցնելու համար քիչ մը կնքամոմ կը դնեն սունկին վրայ եւ ծրագի բոցին կակուղցնելով՝ պղտիկ ունելիով մը քափուրի կտորը վրան կը դնեն: Այս փորձը աւելի հետաքրքրաշարժ ընելու համար բարակ թուղթէ երկու պարողներու պատկերներ կտրեցէք՝ պատկերին մէջ տեսնուածին պէս, ու խուցին վրայ ուղղահայեաց փակցուցէք: Եթէ պէտք եղած նախազգուշութիւններ ձեռք առած էք՝ գործիքը իւղոտ բանի մը չղպցնելու, պիտի տեսնէք որ երեք օր շարունակ կը պարեն թղթէ պուպրիկները:



Ահա՛ որսորդն ու իր շունը, բայց ո՛ր է ՆԱՊԱՍՏԱԿԸ

ՄՐՅՈՒՄ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Իր ստացած նոր ուղղութեան, եւ ծաւալի նոր փոփոխութեան հետ, « Հանրագիտակ » ասկէ վերջ կանոնաւոր բաժին մը պիտի ունենայ պարզեւաւոր շահեկան մրցումներու, որոնց պիտի կրնան մասնակցիլ այս թերթին բոլոր ընթերցողներն՝ անխտիր: Պէտք չենք զգար հոս երկարօրէն բացատրել օգտակարութիւնը այս տեսակ մրցումներու, որոնք իրենց լայն բաժինն ունին արդէն եւրոպական այսօրինակ հրատարակութիւններու մէջ, եւ մեծապէս կը ծառայեն տղոց բնական հետաքրքրութիւնը սրելու եւ անգիտակցաբար ու հետզհետէ ծանօթութեան նորանոր հորիզոններ բանալու անոնց առջեւ: Հետեւաբար այս թիւէն իսկ կը սկսինք մեր ԱՌԱՋԻՆ ՄՐՅՈՒՄԸ՝ որ այս անգամ շարադրութեան նիւթ մը պիտի ըլլայ:

Ա Ն Տ Ա Ռ Ը

1. — Ի՞նչ է անտառ մը. — Ընդհանուր նկարագրութիւն:
 2. — Ի՞նչ օգտակարութիւն ունին անտառները:
 3. — Ի՞նչ օգտակարութիւն ունին լեռներու անտառները:
 4. — Ի՞նչ էր ի հնումն անտառներու պաշտամունքը. — (Խորհրդածութիւններ կրնաք կցել. — Ձեր վրայ ի՞նչ ազդեցութիւն կ'ընէ անտառ մը:
 5. — Անտառին բուսաբերութիւնը:
 6. — Վերջաբան:
- Ի նկատի պիտի առնուին՝
1. — Գրի մաքրութիւնը:
 2. — Ոճի մաքրութիւն եւ յստակութիւն:
 3. — Երագրին համեմատ գրուած ըլլալը:

ՄՐՅՄԱՆ մասին գրութիւնք գատ Խղթի վրայ գրուած պէտք է ըլլան, ապա Խէ ոչ ի նկատի չպիտի առնուին: Պահարանին եւ Խղթին վրայ գրուած պիտի ըլլայ ՄՐՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ: Պայմանաժամ մինչեւ փետրուար 15, որով վերջ այլ եւս ո՛ր եւ է գրութիւն չպիտի ընդունինք:

Մրցանակները երեք կարգ պիտի ըլլան, նայելով Խէ ո՛ր աստիճան յարգուած են մեր երբեակ վերոյիշեալ պայմանները:


Առաջինը պիտի ստանայ մէկ տարեկան Հանրագիտակ:

Երկրորդը » » մէկ տուփ այցաբարտ իր անունը տպելով:

Երրորդը » » զունաւոր սիրուն մեծագիր պատկեր մը:

ՄՐՅՈՒՄԷ վերջ՝ մանրամասն պիտի հաղորդենք նաեւ մեր « Դիտողութիւնները », որք անշուշտ աւանդինն պիտի ունենան իրենց կարեւորութիւնը:

Պ. Բ. Ք.



ԽՄԱԿԱՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԱՌԻՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳԻՒԶ — ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
Կ.ՇԱԿ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ.

Պապը Ալի ճատտէսի, Խիւ 38, Իգտամ լրագրին դէմ

ՀԱՅԿԱՅԻՆ ԻՐԱՏԱՂ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՉԻՒՆՏՐԱՏԻ ՈՒՅԴՈՒՆՈՒՄԸ

1895

41 42

Միջոցառումը կատարվել է Երևանի քաղաքի Կոմիտասի անվան երիտասարդական կենտրոնի կողմից՝ 2024 թվականի օգոստոսի 28-ին, 14:00-15:00 ժամերին:

१ २ ३ ४ ५ ६ ७ ८ ९ १० ११ १२

Կանոն Զոհոթ

« 1922.10.22.10.00.00 »

အိမ်အနီးကပ်စွာရှိသည်။

१७३०२३

[illegible][illegible]

20. 02. 1900

[illegible]

Յաջորդ թիւը պիտի պարունակէ Առաջնորդ Վանառականացի յայտուի նիւթերը եւ

ՋեկոթՅ. — Մի քանի տեղերէ մեզ կը հարցնեն թէ՛ բաժնեդիրները ի՞նչ միջոցով ղրկուելու են : — Այնպիսի բաժանորդները կրնան Օտմանեան թղթատարութեան դրոշմաթուղթով եւ կամ Մանտա բօսթով մեր հասցէին ղրկել ուղղակի :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ . եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ :

Վեցամսեայ ու յոսամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր :

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

Գաւառաց »

Արտասահման

Հատը

30 ղրուշ

35 »

45 »

30 փարայ

Առաջնորդ Վանառականացի 12 օրու զաւանթ ուզողը պիտի Է վճարէ 12 ղրուշ :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԴՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պապապետան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Դօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլիէրեան
Ներսիս, Խաչիկ էֆ. Դ. Թաշեան
Ներսիս, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճեանեան
Երզնա, Տիգրան էֆ. Բրուտեան
Թեփրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խաթերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կիւրիք, Միսաք էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշեան
Մարաշ, Արծ. Տ. Նէրսէս ԲՆ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ագարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքարդեան
Սիւմհանի Բեօյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր Բեօրիս » » »
Տիւրքմէնի, Լեւոն էֆ. Սրապեան

Հատը 30 փարայ

Նշանաւոր վանառական ԻԲՐԱԽՈՍԵԱՆ ԻՓ. Ի լուսանկարը :